ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑՅԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ռ. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

XIX դարի երկրորդ կեսի հայ գրական-հասարակական մտքի պատմության նշանավոր անուններից է Ալեքսանդր Երիցյանը։ Նրա գրչին են պատկանում պատմագիտական, հնագիտական, հրապարակախոսական, ազգագրական և տնտեսագիտական բնույթի բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնք առաջադրում են հայ ժողովրդի պատմության և ժամանակի սոցիալ-տնտեսական ու գաղափարական տեղաշարժերի ուրույն ընկալումներ ու մեկնաբանումներ։ Երիցյանին առանձնապես զբաղեցրել են Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարի հարցերը։ Վերլուծելով երկրամասի տնտեսական հարաբերությունները, երևույթները քննելով ռուս ու եվրոպական տնտեսագիտական ուսմունքների փորձով, նա տեսակետներ է արտահայտել տնտեսագիտական կատեգորիաների և տեսական այլ պրոբլեմների վերաբերյալ, որոնք ուշադրության արժանի տեղ են գրավում հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ։

Իր հայացքներով ու ըմբռնումներով, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Ս. Համբարյանը, Երիցյանն առավելապես հարում էր ազգային-պահպանողական հոսանքին և հենց այստեղ էլ պետք է որոնել աշխարհայացքային այն հիմքը, որի դիտակետից նա մեկնաբանել է հայ ժողովրդի սոցիալական ու տնտեսական զարգացման հարցերը[1]։ 1866 թ. Գ. Տեր-Ալեքսանդրյանցը Թբիլիսիում սկսում է հրատարակել «Վաճառական» շաբաթաթերթը, հիմնական աշխատակից ունենալով Ալեքսանդր Երիցյանին։ Թերթի անվանումն ինքնին որոշ չափով բնորոշում է նրա հիմնադիրների սոցիալ-տնտեսական հայեցության բովանդակությունը։ Եվ որովհետև երկրամասի տնտեսական կյանքում տիրապետողը առևտրական կապիտալն էր, ուստի և տնտեսագիտական արծարծումներում առաջնակարգ նշանակություն են ստանում փողի և շրջանառության ոլորտի հարցերը։

Հայտնի է, որ 1861—65 թթ. քաղաքացիական պատերազմը Ամերիկայում որոշակի տնտեսական հետևանքներ ունեցավ կապիտալիստական աշխարհի և հատկապես եվրոպական երկրների էկոնոմիկայի վրա։ Ծայրահեղորեն կըրճատվեց բամբակի հումքի ներմուծումը[2], առաջ բերելով, այսպես ասած, «բամբակի սով» եվրոպական շուկայում, խորացնելով արդեն բռնկված համաշխարհային ճգնաժամը։ Ինչպես նկատում է Ա. Երիցյանը, դրա հետևանքով «ֆաբրիկայումը հարյուր հազարավոր բանվոր մշակները մնացին անդործ, ֆաբրիկաների մեծ մասը կողպվեցավ։ Բամբակ չկա—առևտրական աշխարհումը կնշանակի գործ չկա, հաց չկա»[3]։ Եվ ահա եվրոպական երկրները սկսեցին որոնել նոր շուկաներ, ապրանքաշրջանառության ոլորտն ընդգրկելով ասիական երկրները, այդ թվում նաև Անդրկովկասը։ Երիցյանը նշում է, որ եվրոպական երկրների տնտեսական այդ կացությունը բացասաբար անդրա-

---

1 *Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 180։*

2 *Տե՛ս* Л. Мендельсон. Экономические кризисы и циклы XIX века. М., 1949, с. 70.

3 *«Վաճառական». 1866, № 1, էջ 1։*

դարձավ. կանոնավոր դրամաշրջանառության վրա և հատկապես շրջանառության մեջ եղած փողի քանակության վրա։ Կ. Մարքսը գրում է. «Բուն գործարանային օկրուգներում արդեն կանխված լինելով բամբակի սովի կողմից, որը ներդրման սովորական ոլորտներից շատ կապիտալներ քշեց դեպի փողային շուկայի խոշոր կենտրոնները, ճգնաժամն այս անգամ առավելապես ֆինանսական բնույթ ընդունեց։ Նրա սկսվելու ազդանշանը եղավ 1866 թ. Լոնդոնի հսկայական բանկերից մեկի սնանկացումը, որին արագ հաջորդեց բազմաթիվ ֆինանսական սպեկուլյանտական ընկերությունների կործանումը»[4]։

Պակասել էր շրջանառության մեջ եղած կանխիկ փողը, բարձրացել էին վարկի տոկոսները, որին, Երիցյանի կարծիքով, էլ ավելի նպաստեց ապրանքաշրջանառության վերելքը ասիական երկրներում։ Բանն այն է, որ եվրոպական տերությունները ամերիկյան բամբակի դիմաց տրված ոսկին ու արծաթը նորից ետ էին ստանում գնված բամբակից պատրաստված ապրանքները ամերիկյան շուկայում իրացնելու միջոցով, մինչդեռ «ազնիվ մետաղները» կուտակվում էին ասիական երկրներում, տեղական շուկայի ցածր տարողության ու եվրոպական ապրանքների նկատմամբ համապատասխան պահանջարկի բացակայության հետևանքով։ Ի դեպ, այդ իրողությունը նկատում էր նաև Տուգան-Բարանովսկին։ Նրա կարծիքով, արևելյան երկրներից փողի կանխիկ վճարումով ապրանքների ներմուծումը միացյալ թագավորություն, «Անգլիայում առաջ բերեց դրամական ճգնաժամ»[5]։ Ա. Երիցյանը գտնում է, որ ասիական ժողովուրդների ընդհանուր քաղաքակրթական մակարդակի հետագա բարձրացման պարագայում, ազնիվ մետաղները նորից կհոսեն Եվրոպա և դա կհանգեցնի այն բանին, որ «Եվրոպայումը հացը կթանկանա, ապրուստը և մշակը կթանկանա, փողը մեծ շահ կունենա, հարուստները առանձին շահով կգործադրեն փողը և ավելի շուտ կհարստանան, աղքատները ետին չքավորությանին կհասնեն։ Մշակութենի գինը, որ հացի գնի հետ մեկ կերպով բարձրանում է միշտ, կթանկանա, մշակ մարդիքը ուրեմն կամաց-կամաց փողատեր կդառնան։ Հարուստները և մշակները կհարստանան, գործին անընդունակ մարդիքը՝ այսինքն նշանակած ռոճիկով ապրողները կաղքատանան և կդժվարանա նրանց կյանքը»[6]։

Ակներև է, որ տնտեսագետը դրամաշրջանառության կարգավորմամբ է պայմանավորում տնտեսական օրինաչափ զարգացումը, հասարակության սոցիալական դիֆերենցիացիայի փաստը, ինչպես նաև մշակների կենսապայմանների բարեկեցությունը։ Պետք է նշել, սակայն, որ թեև Երիցյանը նկատում էր տնտեսական ճգնաժամի ինչ-ինչ անխուսափելի հետևանքներ, այնուամենայնիվ չէր ըմբռնում, որ առևտրի և դրամաշրջանառության ճգնաժամը հենց արդյունաբերական ճգնաժամի արդյունք է, այսինքն նյութական արտադրության ոլորտի ճգնաժամի արդյունքն ու դրսևորման ձևերից մեկը։ Տնտեսական ճգնաժամերի բացատրության հարցում նա ըստ էության տուրք է տալիս վարկադրամային տեսությանը։ Իսկ որքանով «փոխանակային կոնցեպցիայի» այս ելակետը շրջանառության ոլորտին հատկացնում էր առաջնային նշանակություն, դրանով իսկ այն ձեռք է բերում իդեալիստական բովանդակություն։ Քննադատելով «փոխանակային կոնցեպցիայի» տեսաբաններին, Կ. Մարքսը գրում է. «Տասնիններորդ դարի առևտրային ճգնաժամերը, նամանավանդ 1825-ի և 1836-ի մեծ ճգնաժամերը, Ռիկարդոյի դրամական թեորիայի հետագա զարգացում առաջ չբերին, բայց առաջացրին նրա մի նոր կիրառում։ Այդ ճգնաժամերն այժմ այլևս առանձին-առանձին տնտեսական երևույթներ չէին,— ինչպես Յումի մոտ՝ ազնիվ մետաղների արժեքազրկումը

---

4 Կ. Մարքս. Կապիտալ. հ. 1, Երևան, 1954, էջ 700։

5 М. И. Туган-Барановский. Промышленные кризисы в современной Англии, их причины и влияние на народную жизнь. С.-Петербург, 1894, с. 249.

6 «Վաճառական». 1866, № 1, էջ 2։

16-րդ ու 17-րդ դարերում, կամ Ռիկարդոյի մոտ՝ թղթադրամի արժեքազրկումը 18-րդ դարի ընթացքում և 19-րդ դարի սկզբում,— այլ համաշխարհային շուկայի մեծ փոթորիկներն էին, որոնց մեջ դուրս էր պոռթկում բուրժուական արտադրապրոցեսի բոլոր տարրերի կոնֆլիկտը, փոթորիկներ, որոնց պատճառն ու նրանց դեմ պայքարելու միջոցը որոնում էին այդ պրոցեսի ամենամակերեսային և ամենավերացական ոլորտում, դրամաշրջանառության ոլորտում»[7]։

Բայց ինչ է փողը, որ Ա. Երիցյանին ներկայանում է որպես «ազգերի քաղաքական, բարոյական և տնտեսական վիճակը»[8] պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ ուժեղանում է փողի տիրապետությունը, նկատում է Երիցյանը։ Այն իշխում է ամենուրեք, դառնում երկրպագության առարկա, որոշում մարդու հասարակական կեցությունը, տեղն ու դիրքը։ «Մենք ամենքս էլ,— գրում է նա,— սիրում ենք փող, ոսկի, արծաթ։ Մեզ համար ոսկին հարստության, իշխանության, փառքի և բախտավորության իդեան է»[9]։

Փողի, իբրև տնտեսական կատեգորիայի, Երիցյանի բնութագրումները հետևողական բնույթ չունեն։ Եթե նրա հայացքներում մի կողմից կարելի է նշմարել առանձին ակնարկումներ բուրժուական դասական տնտեսագետների այն դրույթի, թե փողը նույնպես ապրանք է, ինչպես «ճրագուն, կաշին, ալյուրը, գինին»[10], ապա մյուս կողմից աննկատելի չէ նաև ոսկին ու արծաթը հարստության ունիվերսալ ձև դիտելու մերկանտիլիստների մտայնությունը։ «Փողը թեպետ ապրանք է,— գրում է նա,— բայց աղնիվ ապրանք է, այսինքն էնպիսի հատկություններ ունե, որ ամեն ապրանքի վրա կարելի է փոխել և սա է մենակ առուտուրի միջոցը։ Փողից է կախված ամեն տեսակ ապրանքների շինելու, գործածելու և առուտուրի դրությունը։ Երբ փող ունենք ամեն բան լավ է գնում, իսկ փողի սակավութենի ժամանակ ամեն բան ուշանում է, էհտիբարը կորչում է, կուտը են ընկնում, ապրանքների գործածությունը քչանում է և վաճառականները չեն իմանում ինչպես ծախել իրենց ապրանքները»[11]։

Ինչպես հայտնի է, անգլիացի տնտեսագետ Վիլյամ Պետին, քննարկելով շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակության հարցը, այն համայում է «քաղաքական օրգանիզմի ճարպը», որի պակասը «նույնքան է խանգարում նրա գործունեությանը, ինչքան և ավելցուկը»[12]։ Երիցյանը կարծես շարունակում է Պետիի պատկերավոր խոսքը. «Մեր կյանքումը,— գրում է նա,— փողի ձեռքից ձեռք անցկենալը միևնույն նշանակությունն ունե, ինչպես արյունը մեր մարմնի մեջ։ Անփողությունը միևնույնն է մեր տնտեսութենի համար, ինչ որ արնի սակավությունը մեր առողջության համար։ Արնի անկարգ վազելուց քայքայվում է մեր առողջությունը, իսկ երբ արյունն էլ չէ շարժվում մարդս մեռնում է. միևնույնը պատահում է և մեր կյանքում, երբ որ փողի կարիք ենք ունենում»[13]։

Ընդհանրապես փողի իբրև ապրանքի արժեքի հարցը Երիցյանին չի հետաքրքրել։ Թեկուզ նա ակնարկում է փողի «ներքին արժողության» մասին, սակայն բոլոր դիպվածներում խոսում է միայն փողի գնի մասին, ելակետ ունենալով առաջարկի ու պահանջարկի տեսությունը։ «Ճշմարիտ է,— գրում է Երիցյանը,— որ փողի գինը բարձրանում է և ցած է ընկնում հարցնողին մտիկ տալով, բայց էդ չի նշանակի թե փողը և ուրիշ ապրանքները միևնույն են։ Տեղին և ժողովրդին մտիկ տալով փողի արժեքը միշտ կարող է փոխվել. միևնույն

7 Կ. Մարքս. Քաղաքատնտեսության քննադատության շուրջը. Երևան, 1948, էջ 221—222։

8 «Վաճառական». 1866, № 22, էջ 86։

9 Նույն տեղում, № 7, էջ 25։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում։

12 В. Петти. Экономические и статистические работы. М., 1940, с. 25.

13 «Վաճառական». 1866, № 7, էջ 25։

փողով կարելի է երբեմն ավելի, երբեմն պակաս ապրանք առնել. բայց փողի նշանակությունը և հատկությունները ամեն տեղ միևնույն են... էդպես ուրեմն փողը առուտուրի միջոց լինելով, ապրանք չէ, ինչպես որ կարծում են տնտեսները։ Առանց թութունի, շաքարի, առուտուր կարող է լինել, բայց քանի որ ամեն ապրանքների գին դնողը փողն է, առանց փողի առուտուրը անկարելի է»[14]։ Մի այլ առիթով նա նկատում է, թե «առևտրական օրենք է, որ ամեն ապրանքի գինը կախված է թե՛ մուշտարու և թե՛ ապրանքի շատությունից»[15]։ Վկայակոչելով Ադամ Սմիթի այն տեսակետը, թե փոխանակության փողային ձևին նախորդել է այդ ֆունկցիան կատարող այլ ապրանքների միջոցով առևտուր անելու պրակտիկան, Երիցյանը, սակայն, այլ մեկնաբանությամբ է ընկալում և ըստ էության ժխտում է փողը ապրանք դիտելու դասական տնտեսագիտության կարևորագույն դրույթներից մեկը։ Ինքնին արդեն հասկանալի է, որ նա չէր կարող ըմբռնել նաև ապրանքափոխանակության զարգացման երկարատև այն պրոցեսը, որը հանգեցրեց փողի, իբրև ընդհանրական համարժեքի, առաջացմանը, մի պրոբլեմ, որ չկարողացավ լուծել ամբողջ նախամարքսյան տնտեսագիտական միտքը։ Ապրանքափոխանակության վերաբերյալ Երիցյանի պատկերացումը իր հիմքով սուբյեկտիվ է, որը և ելակետ է դառնում ինչպես փողի, այնպես էլ մյուս ապրանքների արժեքի որոշման համար։ Քննադատելով Յումին, Մարքսը գրում է, որ «նա շրջանառության պրոցեսի մեջ մտցնում է ապրանքները առանց դնի, իսկ ոսկին ու արծաթը՝ առանց արժեքի» և դա է պատճառը, որ նա «երբեք չի խոսում ապրանքների արժեքի և ոսկու արժեքի մասին, այլ միայն դրանց փոխադարձ քանակների մասին»[16]։

Փողի ապրանքային բնույթի չընկալումը Երիցյանի հարցադրումներում ուղղակիորեն առնչվում է ծագման վերաբերյալ ոչ գիտական մեկնաբանությանը։ Ելակետ ունենալով փողի պետական ծագման տեսությունը, նա ենթադրում է, թե «էդպես ահա ոսկին ու արծաթը փող են համարվում ոչ թե էն պատճառով, որ երկար դիմացող, աղնիվ կամ թանկագին մետաղներ են, այլ միայն էնդուր, որ տերությունները հանձներուն են առել երաշխավորությունը և էդուրով տվել են ոսկուն էն մեծ նշանակությունը, որ ունե նա առուտուրի մեջ»[17]։ Այսպիսով, ժխտելով փողի ապրանքային բնույթը որպես տարերայնորեն զարգացող ապրանքային հարաբերությունների օբյեկտիվ արդյունք, Երիցյանը հանգում է փողի նոմինալիստական տեսությանը, դիտելով այն որպես իրավակարգի արդյունք, որով և որոշվում է նրա վճարունակությունը։ «Ամենքը գիտեն,— գրում է նա,— որ ոսկին ու արծաթը կտրում են փողերանց (մանետնի դվոր) ասած գործարանում։ ...Կտրած փողը (ոսկին ու արծաթը) ոչ այլ ինչ է, եթե ոչ տերութենի կողմից երաշխավորություն, որ էս ու էս մանեթը էսքան քաշ, պրոբ և արժողություն ունե։ Մեկ խոսքով տերությունը էդ երաշխավորությունը փողին հրապարակական փոխ ու տուրսի նշանակություն է տալիս»[18]։

Ա. Երիցյանն անդրադարձել է նաև թղթադրամի հարցի քննությանը։ Նա ընդունում է, որ պատմականորեն սկզբնապես շրջանառության միջոցի ֆունկցիան կատարել են ոսկին ու արծաթը, նախ ձուլակների և ապա դրամի ձևով։ Շրջանառության պրոցեսում դրամի ռեալ պարունակությունը աստիճանաբար խլվում է իր անվանական բովանդակությունից, սակայն մաշված դրամները շարունակում էին շրջանառություն կատարել որպես լիարժեք դրամներ։ Այդ իրողությունը հանգեցրեց այն բանին, որ շրջանառության ֆունկցիայի իրականացման համար ոսկու և արծաթի փոխարեն սկսեցին բաց թողնել փոխարինող թղթադրամներ։ Վերջիններս ըստ էության արժեք չունեին։ «Առաջվա

14 Նույն տեղում, էջ 26։

15 Նույն տեղում, № 4, էջ 14։

16 Կ. Մարքս. Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, էջ 196։

17 «Վաճառական». 1866, № 11, էջ 42։

18 Նույն տեղում։

ժամանակները,— նկատում է Երիցյանը,— հասարակական տնտեսության մեջ փողը (ոսկին, արծաթը) նշանակություն ուներ, հիմի փոքր առ փոքր մենք կարողացել ենք առանց էդ մետաղների էլ առուտուր անել, զանազան թղթերի միջնորդությունով։ Կգա ժամանակ, որ ոսկին և արծաթը բոլորովին էլ չի գործածվիլ փողի պես։ Փող ասելով իհարկե հասկանում ենք միայն ոսկին և արծաթը, իսկ թղթե փողը (կրեդիտնի բիլեթներ կամ ասիգնացիա) և բանկերի դուրս տված զանազան տոմսակները (սերիք և այլն) փողի նշաններ են և գործ են ածվում միայն փողի տեղ»[19]։ «Փողի նշանների» վերաբերյալ նրա դրույթը ըստ էության բովանդակազրկվում է, քանի որ նա չէր հասկանում ոսկու և արծաթի բնույթն իբրև փողի։ Նա փողի մյուս ֆունկցիաների մասին ընդհանրապես չի խոսում և ապրանքային փողի փոխարինումը դրամանիշով չի ածանցում փողի՝ իբրև շրջանառության միջոցի ֆունկցիայի առանձնահատկության հետ։ Ուստի և փողի ծագման պետական տեսության համաձայն, նա ոսկու և արծաթի՝ իբրև փողի, և թղթադրամի ծագումը ենթարկում էր նույն օրինաչափություններին։ Հենց այս առումով էլ նա չի համաձայնում բոլոր այն տընտեսագետների հետ, որոնք ոսկու և արծաթի այդ առանձնահատուկ դերը փորձում էին բացատրել այն բանով, որ դրանք «թանկ են, հազվագյուտ են, պինդ են, չեն փչանում և էսպիսի հատկություններով ավելի բարձր են, քան թե մյուս մետաղները և դրամաթղթերը»[20]։

Ինչպես հայտնի է, Լյուդովիկոս XIV-ի մահից հետո Ֆրանսիան տնտեսական և ֆինանսական ծանր կացության մեջ է ընկնում։ Երկիրը այդ դրությունից հանելու համար Շոտլանդիայից հրավիրում են Լոյին, որն իր հիմնած բանկային սիստեմով թղթադրամ թողարկեց Ֆրանսիայում, բայց ի վիճակի չեղավ երկիրը դուրս բերել տնտեսական ճգնաժամից։ Ի դեպ, Լոյը մերկանտիլիստների հայտնի գաղափարախոսներից էր, որը մետաղե դրամաշրջանառությունը տնտեսության զարգացման համար արգելակիչ ուժ համարելով, ամենառացիոնալ փողը հռչակում էր թղթադրամը և դրանով իսկ վերջնականապես «մերկանտիլիզմը հասցնում աբսուրդի»[21]։

Երիցյանը նույնպես հակված էր գերագնահատելու թղթադրամի նշանակությունը և պատահական չէ, որ վկայակոչում է Ռիկարդոյի այն խոսքերը, որ «փողի կատարյալ ձևը թղթադրամն է»[22]։ Ի դեպ, սա յուրահատուկ էր նոմինալիստներին, հաստատելով «փողի նկատմամբ ապրանքային մոտեցման» անտեսումը և ընդունելով սուբստանցիոնալի հանդեպ նրա անվանական նշանակության առաջնությունը[23]։

Ա. Երիցյանը համաձայն է Ալեքսանդր Հումբոլտի տեսակետին, ըստ որի, թղթադրամի առաջացման անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հակասությամբ, որ գոյություն ուներ ոսկու և արծաթի քանակության և առևտրի ընդլայնման միջև, այսինքն արտադրված ապրանքների և դրանց իրացման համար անհրաժեշտ փողի սահմանափակ քանակի հետ։ «Ուրեմն որքան շատ է որևիցե երկրի առուտուրը ծաղկում,— դրում է նա,— էնքան ավելի է փողի հարկավորությունը շատանում և էնքան ավելի է քչանում և անհետանում փողը»[24]։ Ուստի նա կարծում է, թե կգա ժամանակը, երբ «ոսկին և արծաթը բոլորովին էլ չի գործածվիլ փողի պես»[25]։ Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Զուրաբյանը, Երիցյանը ոչ թե բուրժուական շատ տնտեսագետների պես ուտոպիական ծրագիր ուներ ընդհանրապես վերացնել փողը և դրանով իսկ հասնել կապիտալիստական ներհակությունների վերացմանը, այլ պարզա-

---

19 Նույն տեղում, էջ 41։

20 Նույն տեղում, էջ 42։

21 Д. Розенберг. История политической экономии. Ч. I, М., 1934, с. 66.

22 «Վաճառական». 1866, № 27, էջ 105։

23 А. Б. Эйдельнант. Очерки из истории денежных теорий. М., 1929, с. V.

24 «Վաճառական». 1866, № 18, էջ 70։

25 Նույն տեղում, № 11, էջ 41։

պես հանգում է աղնիվ մետաղները շրջանառության այլ միջոցներով փոխարինելու գաղափարին[26]։

Փողի քանակի և ապրանքների քանակի անհամապատասխանության հետևանքն ըստ Երիցյանի լինում է այն, որ «կանգնում է առուտուրը, վաճառականների դուքաններում մնում են ածած ապրանքները, առնող չկա, փող չկա, գործ չկա։ Առանց փողի ապրանքները մինչև անգամ իրենց արժողությունը կորցնում են։ Ինչն է էդ բոլորի պատճառը— ոսկին ու արծաթը։ Էդպես ահա փողն է դադարեցնում առուտուրը, ոչնչացնում ապրանքների արժողությունը, փողն է կոտրությենի և աղքատության պատճառը»[27]։ Այդ առումով էլ նա մի այլ տեղ փողը համարում է «առուտուրի չարիքը», որի պակասության ժամանակ «գործը քչանում է, պարապ մարդիկ շատանում են, թանկություն է ընկնում, ապրանքները քիչ են ծախվում, վաճառականները և ֆաբրիկանտները վնասում են, ու էդպիսով խղվում է մշակ մարդկանց օրական հացը։ Փողի պակասության ժամանակ ֆաբրիկանտը և գործարանի տերը իրանք թանկ առնելով չմշակած ապրանքները, քիչ էլ ցանկացողներ են գտնվում նրանց ապրանքներ շինել տալու... արձակում են ավելորդ մշակներին և պակասեցնում են մշակների օրական փորձը»[28]։ Մի այլ առիթով նա նշում է, որ եվրոպական երկրների տնտեսական զարգացման պատմությունը վկայում է, որ «կրիզիսների ամենից լավ գուշակողները բանկերն են», «բանկը ամեն անգամ շատ մեծ զումարի վեքսիլներ է վեր առել գրավ, իր նաղդ փողը, իր ապահովությունը բոլորը դուրս տվել»[29]։ Այս առումով, խոսելով Ջոն Լոյի հիմնած բանկերի մասին, եզրակացնում է, թե «այժմյան բանկերը չեն կարող կատարել իրենց նշանակությունը և փոխանակ առուտուրին կենդանություն տալու, միայն դանդաղեցնում են առուտուրը և պատճառ են լինում կրիզիսների և թե կոտրությունների»[30]։

Բանկերի նկատմամբ նման բացասական վերաբերմունքը պատահականություն չէր։ Դեռևս անցյալ դարի 30—40-ական թթ. տնտեսագետներ Օվերստոնը, Տորրենսը և ուրիշներ տնտեսական ճգնաժամերի առկայությունն Անգլիայում կապում էին բանկային գործի ոչ ճիշտ կազմակերպման հետ, որ իբր արժեթղթերի չափից դուրս բացթողումը հանգեցնում է կանոնավոր դրամաշրջանառության խաթարումների՝ ճգնաժամերի պատճառ դառնալով։ Ճգնաժամերի նման բացատրությունը չի կարող գիտական լինել և բնական է, որ վերարտադրությունը կարգավորելու նպատակով Անգլիայում 1844 թ. անցկացված Ռոբերտ Պիլի բանկային ռեֆորմը որևէ գրական արդյունք չունեցավ։

Իհարկե, Երիցյանը բնավ էլ հակված չէր վերացնելու բանկերը։ Ընդհակառակը, նա բանկերը դիտում էր որպես «հասարակությենի օգտի համար կազմրված բաներ», ուստի և առաջարկում էր՝ նախ իրականացնել հասարակական հսկողություն բանկերի վրա, ստեղծելով «մեկ հասարակական կենտրոնական բանկ», ուր կենտրոնացված լինեն առևտրական բոլոր գործարքները և ապա, հաշվի առնելով «հասարակությենի օգուտը», կարգավորել «տոմսակների և թղթադրամների գործածության ուղիղ ընթացքը»[31]։ Ինչպես տեսնում ենք, Երիցյանը նպատակ ուներ շրջանառության ոլորտի կարգավորման միջոցով շտկելու կապիտալիստական վերարտադրության ներհակությունները, չնկատելով, որ բանկերի միջոցով տարբերայնորեն տեղի է ունենում կապիտալի բաշխում արտադրության տարբեր ճյուղերի ու ոլորտների միջև, որը նպաստում է արտադրողական ուժերի զարգացմանը, արտադրության հասարակա-

---

26 Ս. Զուրաբյան. Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր. Երևան, 1959, էջ 244։

27 «Վաճառական». 1866, № 18, էջ 70։

28 Նույն տեղում, № 14, էջ 54։

29 Նույն տեղում, № 24, էջ 94։

30 Նույն տեղում, № 27, էջ 105։

31 Նույն տեղում, էջ 107։

կան բնույթի խորացմանն ու կապիտալիզմի հակասությունների հետագա սրմանը։

Քաղաքատնտեսության պատմությունն սկսվում է մերկանտիլիստներից (XVI—XVII դդ.)։ Դա առևտրական կապիտալի զարգացման և «նախասկզբնական կուտակման» ժամանակաշրջանն էր, երբ ստեղծվում էին կապիտալիստական հասարակարգի գոյացման նախադրյալներ։ Մերկանտիլիստները վաղ շրջանի արդյունաբերական կապիտալին նախորդող առևտրական կապիտալի գաղափարախոսներն էին, կապիտալիստական հասարակարգի տնտեսական կառուցվածքի առաջին վերլուծողները, որոնք առաջին անգամ փորձ արեցին քննության ենթարկել հարստության ստեղծման պրոբլեմը։ Երիցյանի համողմամբ մերկանտիլիզմի տնտեսական ուսմունքը տիրապետել է մինչև XVIII դարի վերջերը, մինչև անգլիացի տնտեսագետ Ադամ Սմիթի հանդես գալը, որն իր «Ազգերի հարստություն» կոչված աշխատությունով քանդեց էդ ուսումի հիմքերը»[32]։ Տեղին է նկատել, որ մերկանտիլիզմը իբրև տնտեսագիտական ուսմունք արդեն սկսել էր հաղթահարվել Ֆրանսիայում ի դեմս դասական տնտեսագիտության, որի ներկայացուցիչները (Բուագիլբեր, Քենե, Տյուգո և ուրիշներ), սկսած XVII դարից, տնտեսական երևույթների ուսումնասիրության ելակետը շրջանառության ոլորտից փոխադրեցին արտադրության ոլորտը, փորձելով տալ հարստության ստեղծման հարցի գիտական բացատրությունը։ Մեկնակետ ունենալով Սմիթի արժեքի աշխատանքային տեսությունը, Երիցյանն այդ մասին չի ակնարկում, այլ վկայակոչումներ է կատարում ազատ առևտրի պաշտպանների աշխատություններից, ցույց տալու համար մերկանտիլիստների սխալները։ Նրա կարծիքով թե՛ մերկանտիլիստները և թե՛ ազատ առևտրի կողմնակիցները իրենց մոտեցման մեջ ճիշտ չէին, «որովհետև երկուսն էլ մեկ նպատակ ունեն առաջներին, միայն թե նպատակին հասնելու համար զանազան ճանապարհներ ունեն ընտրած»[33], «քաղցածությունից կմեռնեին մարդիկ, եթե որ փորձ փորձեին գործ դնել կյանքի մեջ թե՛ մերկանտիլյան ուսումը և թե՛ ազատ առևտրի ուսումը»[34]։

Կարծես հակված լինելով ընդունելու ազատ առևտրի քաղաքականությունը, Երիցյանը գրում է. «Կարծիք չկա, որ առևտուրը պետք է ազատ լինի— էդ է պահանջում առողջ դատողությունը, ճշմարտությունը և իրավունքը։ Աշխատանքի և առևտրի ազատությունը միմյանց հետ անբաժան գաղափարներ են։ Բայց հետագեմ քաղաքական տնտեսները առաջարկում են առևտուրի ազատությենի համար ոչնչացնել մաքսատները և վերացնել մանավանդ ներս գալու ապրանքների մաքսերը։ Ի՞նչ է ուրեմն դրանց պահանջած առևտուրի ազատությունը, եթե էդ ազատության նպատակն է միմյանց օտար երկրի ապրանքների առանց մաքսի ներս բերելը, օտար երկրի ֆաբրիկանների մաքառելը մեզերի հետ— էդ ոչ թե ազատություն է, այլ առևտրական անկանոնություն, շահասիրական ինքնակամություն, կնշանակե միջոց տալ ուժեղին իր ուժը գործ դնել տկարի դեմ, մշակներին հավիտյան ճորտ պահել և փողին ու գրամագլխին հաղթող հանդիսանալ»[35]։ Այստեղից էլ նրա այն հետևությունը, որ «առևտրի ազատությունը պետք է հիմնված լինի երկու երկրների իրենց ապրանքների հավասար տուր և առի վրա։ Եթե մեկ երկիրը քիչ է փոխում և ծախում իր ապրանքը մյուսի հետ էս ընդդեմ է իրաՀմատանքին և տնտեսական օրենքին։ Էդ պատճառով ամենքը, որոնք փոխում են կամ ծախում են իրանց ապրանքը, պետք է ստանան փոխարեն էլի էնքան գին ունեցող ապրանք կամ փող. ստացածը տվածի հետ հավասար պետք է լինի, ոչ ավելի և ոչ պակաս։ Էդ բանի վրա հիմնված է բոլոր հասարակական տնտեսությունը։ Ամեն առուտուր, որ էդ օրենքի վրա չէ հիմնված, վնասակար է»[36]։

---

32 Նույն տեղում, № 8, էջ 27։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում, էջ 30։

35 Նույն տեղում, № 9, էջ 34։

36 Նույն տեղում։

Ինչպես տեսնում ենք, Երիցյանը չէր ընդունում դասական տնտեսագիտության ազատ առևտրի սկզբունքները և հակված էր չափավոր մաքսային քաղաքականության միջոցով հավասարակշռված առևտրի իրագործմանը։ Ճիշտ է, ազատ առևտրի քաղաքականությունը կործանարար հետևանքներ կարող էր ունենալ տնտեսապես թույլ զարգացած երկրների համար, սակայն հայ տնտեսագետը չէր հասկանում, որ այն պահանջները, որ դեռ շատ առաջ առաջադրում էին տնտեսագետներ Կրյուսեն, Բաստոնը, Քենեն, Ռիվերան և ուրիշներ և որոնք իրենց տեսական մարմնացումն ստացան Սմիթի և Ռիկարդոյի աշխատություններում, պատահական չէին և պայմանավորված էին օբյեկտիվ գործոններով։ Ստեղծվել էր դրանց իրականացման նյութական հիմքը, կապված արդյունաբերական հեղաշրջման հետ, որն արդեն XVIII դարի վերջերից ցնցումներ էր առաջացնում Անգլիայի տնտեսական կյանքում։ XIX դարի սկզբներին արդյունաբերությունն այնքան էր հզորացել, որ համաշխարհային շուկայում Անգլիայի համար ամեն մի մրցակցությունից դուրս վիճակ ստեղծելու հնարավորություն էր տվել։ Այս առումով, որքան բնական էին մերկանտիլիզմի տեսական դրույթները, նույնքան նոր ժամանակների համար բնական էին ազատ առևտրի քաղաքականության վերաբերյալ դասական տնտեսագիտության տեսական հիմնավորումները։ Ազատ առևտուրը տնտեսական ազատ նախաձեռնության սկզբունքներից մեկն էր, որն ակնկալում էր արդյունաբերական բուրժուազիայի քաղաքական տիրապետության հաստատում և միջնադարյան ցեխային հարաբերությունների վերջնական ոչնչացում։ Ազատ առևտրի Երիցյանի ըմբռնումները վկայում են, որ երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերում նա հարում էր ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական հայեցությանը։

Երիցյանի մի շարք ասույթները վկայում են, որ հարստության ստեղծման պրոբլեմը նա ավելի շուտ լուծում է մերկանտիլիզմի ուսմունքի շրջանակներում. «Առևտրի մեջ միշտ նրա կողմն է օգուտը ով ավելի փող ունե ու կարողացել է սրան կամ նրան շահով իրանց տալ», «Ով է հարուստը—փողատերը, որը որ նաղդ ոսկի և արծաթ ունե, թե վաճառականը, որը որ ապրանք ունե դարսած իր ամբարներումը։ Փողատերը միշտ կարող է առնել ինչ-որ կամենա, իսկ վաճառականը առաջ պետք է ծախե իր ապրանքները, որ հետո փող ունենա, իսկ ապրանքները ինչպես հայտնի է ամեն ոքպե ու ոնց որ լինի չի կարելի ծախել։ Ամեն փոքրիշատե առուտուրի հետ ծանոթ մարդ գիտե, որ առանց փողի առուտուրը— կոտրութենի նշան է, էդ է պատճառը, որ ոսկու և արծաթի մեր երկրի սահմանից դուրս տանելուցը կանգնում է ու դժվարանում է առուտուրը»[37], «բոլոր մարդկութենի վիճակը կախված է առուտուրից։ Եթե հանկարծ վերջանար աշխարհիս վրա էդ առ ու տուրը, կարելի է ասել, որ ընդհանուր մարդկությունը կկուտրանար, հարյուր միլիոնավոր մարդիկ քաղցած կմեռնեին... Առուտուրը նման է մեր երակներում վազող արյունին, և ինչպես որ արյունի վազելու շտապեցնող կամ ծանրացնող բաները վնասակար են առողջութենին, էնպես էլ մեր տնտեսական կյանքին և բարօրութենին վնաս է էն ամեն բանը, որը որ խանգարում է և ծանրացնում է առուտուրի ուղիղ ընթացքը»[38]։ XIX դարի 60-ական թթ. հայ իրականության բուրժուական զարգացման պրոգրեսիվ տենդենցները դեռ նոր էին ձևավորվում, ուստի միանգամայն բացատրելի են տնտեսական երևույթների նման մեկնաբանությունները։ Ֆ. Էնգելսը մի առիթով նկատել է, թե «կապիտալիստական արտադրության չհասունացած վիճակին, չհասունացած դասակարգային հարաբերություններին համապատասխանում էին նաև չհասունացած տեսությունները»[39]։

Ա. Երիցյանը աշխատանքի բաժանումը չէր կապում արտադրողական ուժերի և ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման հետ։ Քա-

37 Նույն տեղում, էջ 33—34։

38 Նույն տեղում, № 19, էջ 74։

39 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս. Ընտիր երկեր. հ. 3, էջ 151։

նի որ առանձին անհատը իր բազմակողմանի պահանջմունքների բավարարման համար չի կարող ամեն ինչ արտադրել, ուստի և առաջանում է «մեկը մյուսին օգնելու» անհրաժեշտությունը։ «Մեկը մյուսին օգնում է,— գրում է նա,— մեկը չի կարող ապրել առանց մյուսի, որովհետև մեկ մարդ հնար չունի իրան կյանքի մեջը հարկավոր ամեն բաները պատրաստելու։ Մի՞թե կարելի է, որ մեկ մարդ միևնույն ժամանակը երկրագործ էլ լինի, ջրաղացպան էլ, հաց թխող էլ, ոչխարապան էլ, մահուդ շինող էլ, դարբին էլ, ոսկերիչ էլ և այլն և այլն։ Անկարելի բան է»[40]։ Եթե սա մի կողմից հիշեցնում է տնտեսական կյանքում մարդկանց փոխհարաբերությունների մասին Ադամ Սմիթի ձևակերպումը, թե «տուր ինձ այն, ինչ ինձ անհրաժեշտ է և դու կստանաս այն, ինչ քեզ է անհրաժեշտ»[41], ապա մյուս կողմից ընդհանրություններ է հայտնաբերում Ֆրեդերիկ Բաստիայի՝ շահերի ներդաշնակության տեսության հետ[42]։ Երիցյանը, կարծես կրկնելով տնտեսական հարաբերությունները փոխադարձ ծառայություններ դիտելու վերջինիս մտայնությունը, գրում է. «Ամեն տեսակ առևտրի մեջ, ծախողը և առնողը միմյանց ծախածի և առածի, կամ պարզ ասենք, միմյանց վրա փոփոխած ապրանքների հավասար հարկավորություն ունեն և էդ պատճառով հավասար էլ ծառայություն են ցույց տալիս միմյանց։ Էս է առուտուրի օրենքը և նշանակությունը, բայց միմիայն ոսկու առուտուրը էդ օրենքին չի ենթարկվում»[43]։ Այսպիսով, եթե մի դեպքում կապիտալիստական հասարակարգն իր սոցիալական ու տնտեսական հակասություններով ներկայանում է որպես ներդաշնակ ասոցիացիա, ապա մյուս կողմից, նրա տնտեսագիտական սիստեմը փաստորեն ուղղված էր դասական տնտեսագետների արժեքի աշխատանքային տեսության դեմ։

Ս. Երիցյանը անդրադարձել է նաև երկրամասի ներտնտեսական խնդիրների լուսաբանությանը։ Հայտնի է, որ տնտեսագիտության ազատ դպրոցի ներկայացուցիչները մրցակցությունը համարում էին տնտեսական կյանքի զարգացման խթանը։ Երիցյանը, բիրժաների մասին խոսելով, նկատում է, թե «բոլոր էդ վաճառականների թե՛ ծախողների և թե՛ առնողների միասին ժողովվիլը և միասին գործ տեսնելը պատճառ է լինում նրանց մեջ կոնկուրենցիա ծագելու, առանց որի ոչինչ առաջադիմություն աշխարհիս վրա կարելի չէ։ Կոնկուրենցիան միայն կարող է չափավոր ուղղություն տալ վաճառականներին վնասակար մոնոպոլիայից[44]։ Ինչպես տեսնում ենք, ազատ մրցակցությունը զարգացման խթան դիտելուց բացի (որը համապատասխանում էր զարգացման բուրժուական ուղին թևակոխած երկրամասի պահանջներին), նա այն դիտում էր որպես մոնոպոլիայի առաջացմանը խոչընդոտելու կարևորագույն միջոց, չնկատելով, որ ազատ մրցակցությունը հենց այն գործոններից մեկն է, որը զարգացման դիալեկտիկայի ուժով տանում է դեպի արտադրության համակենտրոնացում և դրա հետ նաև՝ մոնոպոլիաների առաջացում։

---

40 «Վաճառական». 1866, № 35, էջ 138։

41 А. Смит. Исследование о природе и причинах богатства народов. М.—Л., 1931, с. 21.

42 Տե՛ս Ф. Бастиа. Экономические гармонии.—«Библиотека экономистов». Вып. VII. М., 1896, с. 210.

43 «Վաճառական». 1866, № 19, էջ 74։

44 Նույն տեղում, № 30, էջ 119։

Ա. Երիցյանն ընդհանրապես կողմնակից էր երկրամասի տնտեսական արագ զարգացման համար արտադրության առաջավոր մեթոդների ներդրմանը։ «Արդյոք մեր արհեստավորները, գետին վարողները և տավար պահողները աշխատո՞ւմ են իրանց արհեստների կատարելագործելու համար,— գրում է նա,— թե՞ էլի վաղուցվա պես շարունակում են իրենց գործը։ Ցավով ենք ասում, որ մեր երկրի արհեստները և վաճառականությունը համարյա թե միևնույն օրումն են, ինչպես առաջ»[45]։ Այս առումով նա կարևոր է դիտում եվրոպական կապիտալի բարերար ազդեցությունը, որը ցույց կտա, «թե ինչպես պետք է ավելի օգուտ քաղել մեր երկրիցը, որն ամեն բանով հարուստ է և շատ քիչ մարդիկ ունե, որ սարերիցը հանեն ու հալեն հանքերը, կանոնավոր կերպով տավար պահեն, ապրեշում շինեն, բամբակ ցանեն և այլն», երկաթուղու շինարարությունը, որը մեծապես կընդլայնի երկրամասի կապերը այլ տընտեսական շրջանների հետ, ուսումնարանների բացումը, որոնք հնարավորություն կտան «կանոնավոր կերպով սովորեցնելու մեղ հարկավոր արհեստները»[46] և այլն և այլն։ Տնտեսական զարգացման համար ոչ պակաս նշանակություն ունեն առնչությունները, ինչպես, օրինակ, 1867 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսը, որը մեծապես նպաստեց արտադրության առաջավոր մեթոդների ճանաչմանը։ Երիցյանը հատկապես կարևոր էր համարում բնական գիտությունների զարգացումը։ Ի դեպ, նկատենք, որ այդ գործոնին կարևոր նշանակություն էր տալիս Պիսարևը, որը շեշտելով գիտության դերը արտադրողական ուժերի զարգացման պրոցեսում, բնական գիտությունները համարում էր արտադրողական ուժերի բաղկացուցիչ մասը։ Ընթերցողներին ծանոթացնելով Պ. Ռոնչևսկու կարդացած մի դասախոսությանը, Երիցյանը շեշտում է նրա այն տեղերը, որոնցում հեղինակը, նկատի առնելով եվրոպական երկրների տնտեսական զարգացման փորձը, ընդգծում է, որ «Արևմտյան Եվրոպայում սովորելու և գրավող բանն է բնական գիտությունը... ոչ մեկ գիտություն էնքան օգտավետ չէ և մարդու պիտանի, ինչպես բնական գիտությունները»[47]։ Այս առումով «Վաճառական» թերթը դրվատանքով է խոսում 1865 թ. Մոսկվայում «Петровская земледельческая и лесная Академия»-ի բացվելու մասին։

Հետևելով անգլիացի տնտեսագետ Կոբդենին, Երիցյանը հասարակական բարօրությունը մի զգալի մասով էլ կապում է խնայողության գաղափարի հետ։ «Աշխատանքը և պահպանողությունը,— գրում է նա,— կարող են ամեն մարդու անկախությենի հասցնել։ Հասարակ արհեստավորն էլ ու մշակն էլ կարող են անկախություն ճանաչել, եթե զգուշությենով ետ գցեն իրանց արդյունքը և իրանց փողերի անօգուտ բաների վրա մսխելուց ձեռը վեր առնեն։ Թեպետ շատ փոքր բան է յուրաքանչյուր կոպեկը, բայց էդպիսի կոպեկների օրինավոր մսխելով և պահպանությենով, շատ անդամ կարող են ապահովել հազարավոր գերդաստաններ»[48]։ Նման մեկնությունը տեսական եզրեր է որոնում գռեհիկ տնտեսագիտության «ժուժկալության» տեսության հետ, որը մի կողմից արդարացնում է հարստության բաշխման կապիտալիստական կարգը, մյուս

45 Նույն տեղում, № 3, էջ 10։
46 Նույն տեղում։
47 Նույն տեղում, № 6, էջ 23։
48 Նույն տեղում, № 35, էջ 138։

կողմից հանդես գալիս որպես հասարակական առաջընթացի զսպանակ։ Թեկուզ ոչ հստակ, Երիցյանն այնուամենայնիվ կարևոր էր համարում նաև փողերի արտադրողական կիրառությունը։

Սրանք են տեսական այն զուգահեռները, որոնց շրջանակներում Երիցյանը կատարում է տնտեսական կատեգորիաների վերլուծությունը։ Ինչպես նրա, այնպես էլ ընդհանրապես «Վսեճառականի» տնտեսագիտական դիրքորոշումները իդեալիստական բնույթ ունեին։ Թեև ազգի ու գիտակցության փիլիսոփայական հարցում առանձին դեպքերում կարևոր և առաջնային տեղ էր հատկացվում նյութական կողմին, սակայն դրանք մնում էին միայն որպես մասնակի դիտարկումներ։ Քանի որ շրջանառության ոլորտին առաջնային նշանակություն է տրվում, պարզ են դառնում հասարակության պատմական զարգացման հարցերի վերաբերյալ առաջադրված սկզբունքների նելուքին հակասությունները ու սահմանափակությունը, այդ սկզբունքների մետաֆիզիկ բովանդակությունը, որոնք, սակայն, հետաքրքրական են ժամանակի հայ տընտեսական մտքի առանձնահատկությունների բացահայտման տեսակետից։

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ АЛЕКСАНДРА ЕРИЦЯНА

Р. Н. САРИНЯН

(Резюме)

Александр Ерицян—один из известных представителей армянской общественной мысли второй половины XIX века, исследователь экономических отношений Закавказья, анализировавший их по опыту русских и европейских экономических учений. Его взгляды представляют определенный интерес для истории армянской экономической мысли. Так как в экономической жизни Закавказья преобладал торговый капитал, в исследованиях Ерицяна первостепенную значимость получили темы денег и сферы обращения. В статье подвергаются критическому анализу высказывания Ерицяна по вопросам исторического развития общества, показываются внутренние противоречия, ограниченность выдвинутых им принципов и их метафизическое содержание.